ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի
ողջույնի խոսքը ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի
հիմնադրման 50-ամյակին նվիրված հանդիսության կապակցությամբ
(29.09.2016 թ.)

Հարգելի գործընկերներ,

Թույլ տվեք շնորհավորել ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի 50-ամյակի առիթով:

Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտն իր անցած ուղով ուրույն տեղ ունի Հայաստանի արդի գիտական համակարգում: Իրականացվող բազմաբնույթ գիտական և հետազոտական ծրագրերը, անձնակազմի մասնագիտական արհեստավարժությունը, միջազգայնացման գործընթացի ինտեգրման ուղղությամբ տարվող աշխատանքներն իրենց անմիջական ազդեցությունն ունեն երկրի գիտական համակարգի ձևավորման գործում:

Այսօր ակադեմիական ինստիտուտներում աշխատում են բազմաթիվ վաստակաշատ գիտնականներ: Ամեն տարի ակնհայտորեն բարելավվում են մեր գիտնականների աշխատանքի արդյունավետության ցուցանիշները, բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում տպագրված հոդվածների քանակը և որակը: Եվ, այս առումով, մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի դերը և կատարած աշխատանքներն էական են: Ձեր ինստիտուտը գրեթե մշտապես ակտիվորեն մասնակցում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից կազմակերպվող բոլոր մրցույթներին, ծրագրերին: Ինստիտուտի գիտաշխատողները ներգրավված են պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական թեմաներում և ծրագրերում, ինստիտուտում հաճախ են կազմակերպվում գիտական միջոցառումներ: Երիտասարդ գիտնականները մասնակցում, ինչու չէ, նաև կազմակերպում են ամառային դպրոցներ, օգտվում են երիտասարդ գիտնականների աջակցությանն ուղղված դրամաշնորհներից: Բավականին զարգացած են ինստիտուտի կապերը միջազգային գիտական համագործակցության բնագավառում: Ինստիտուտն ինտեգրված է միջազգային գիտական համակարգի մեջ և սերտորեն համագործակցում է մի շարք արտասահմանյան գիտական կենտրոնների և համալսարանների հետ:

Հարգելի գործընկերներ,

Գիտության պետական կոմիտեի և անձամբ իմ անունից կրկին շնորհավորում եմ հոբելյանական օրվա առիթով: Գիտական անսպառ եռանդ, գործին սեր ու նվիրում եմ մաղթում ինստիտուտի ղեկավարությանը և ողջ անձնակազմին: Հաջողություններ և նորանոր ձեռքբերումներ ձեզ գիտության ոլորտի զարգացման գործում:

***ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***